ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՂՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ

Խաղողագործության ճյուղի արդյունավետության բարձրացման հիմնական ուղղություններից մեկը համարվում է ենթակառուցվածքային և ինստիտուցիոնալ բարեփոխումները: Շուկայական հարաբերությունների պայմաններում հույժ կարևոր է ենթակառուցվածքների գործունեությունը: Խաղողագործությունում և խաղողի իրացման բնագավառում ստեղծված և կանխատեսվող իրավիճակի վերլուծության արդյունքում գտնում ենք անհրաժեշտ իրականացնել այնպիսի կառուցվածքային բարեփոխումներ, որոնց կիրառումը հնարավորություն կընձեռի բարձրացնել ճյուղի արդյունավետությունը, առավելագույնս օգտագործելով առկա ներուժը: Ենթակառուցվածքների բարեփոխումների միջոցով բնատնտեսական ներուժի արդյունավետ օգտագործումը, առաջին հերթին, թույլ կտա հնարավոր կարճ ժամանակահատվածում բարձրացնել արտադրանքի մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում, որի արդյունքում կապահովվի և, մասնավորապես, ճյուղի զարգացումը: Հայտնի է, որ ենթակառուցվածքային բարեփոխումները բարդ և դինամիկ գործընթաց է, որը պետք է համարժեք լինի տնտեսությունում, այդ թվում ոլորտում ստեղծված և կանխատեսվող իրավիճակին, սակայն այդ բնագավառում նույնպես առկա են իրենց լուծումը պահանջող խնդիրներ, չնայած դրան, որ վերջին տասնամյակում բավականին մեծ աշխատանք է տարվել այդ ուղղությամբ:

Պետական կարգավորման գործընթացը կառավարման գրեթե բոլոր մակարդակներով խոչընդոտվում է ոլորտի կայուն զարգացման ռազմավարության ծրագրի բացակայությամբ և այդ բնագավառում միջազգային առաջավոր փորձի ոչ խորը վերլուծությամբ և տեղայնացմամբ: Հաշվի առնելով ագրոպարենային ներքին և արտաքին շուկաներում տեղի ունեցող անընդհատ փոփոխությունները, անհրաժեշտություն է առաջանում մշտապես կատարելագործել պետական կարգավորման կառուցակարգերը, դրանք առավելագույնս համապատասխանեցնելով միջազգայնորեն ընդունված նորմերին, որոնց կիրառկումը հնարավորություն կընձեռի ինտեգրել երկրի գյուղատնտեսու-

թյունը միջազգային կառույցներին և այլ ճյուղերի զարգացման հետ մեկտեղ կխթանի նաև խաղողագործության զարգացումը: Պետական կարգավորումը պետք է նպատակաուղղված լինի ագրոպարենային ոլորտի, այդ թվում բուսական ծագում ունեցող պարենահումքի (որոնց թվում է, անշուշտ, նաև խաղողը) և նրա վերամշակումից ստացված արտադրանքների մրցունակության բարձրացմանը ինչպես ներքին, այնպես էլ արտաքին շուկաներում: Միջազգային փորձի ուսումնասիրման արդյունքում ագրարային ոլորտի պետական կարգավորման մակարդակը Հայաստանում պետք է լինի գրեթե ամենաբարձրը՝ այլ ոլորտների համեմատությամբ:

Ոռոգման համակարգ: Վառելիքա-էներգետիկ ռեսուրսների սղությունը, դրանց նկատմամբ կախվածությունը ներմուծումներից և, մյուս կողմից տնտեսական մասնակի շրջափակումը, ինչպես նաև ներմուծվող էներգակիրների գների կտրուկ աճը վերջին տասնամյակում անհրաժեշտություն են առաջացրել աստիճանաբար փոխարինել մեխանիկական ոռոգումը՝ ինքնահոս եղանակով ոռոգմամբ: Այդ հարցի լուծումն ունի կարևոր ռազմավարական նշանակություն այն առումով, քանի որ արդյունքում կնվազի տեղական արտադրության բուսաբուծական գյուղմթերքների ինքնարժեքը, այսինքն կբարձրանա դրանց մրցունակությունը ներքին և արտաքին շուկաներում:

Հանրապետության մելիորատիվ իրավիճակը բարելավելու նպատակով մասնավորապես նպատակահարմար է կատարել համակարգի գործունեության բարելավմանն ուղղված հետևյալ բարեփոխումները.

- Օժանդակել ջրօգտագործողների միությունների (ՋՕՄ) ֆեդերացիայի ստեղծմանը, որի արդյունքում կհամակարգվեն կառույցների աշխատանքները, կբարելավվի ՋՕՄ-երի անձնակազմի ուսուցման, փորձի փոխանակման գործընթացը:
- Վերանայել ջրի միասնական սակագները, այն փոխարինելով տարածաշրջանի կամ ջրավազանի համար սահմանվող, տարբերակված սակագնով:
- Դոնոր կազմակերպությունների աջակցությամբ մշակել ջրային ռեսուրսների օգտագործման 20-ամյա վերականգնման և վերակառուցման ծրագիր, առաջնությունը տալով մայր և միջտնտեսային համակարգերին և նոր տեխնոլոգիաների ներդրմանը, միաժամանակ իրագործելով ենթակառուցվածքի աստիճանական մասնավորեցումը:

Նախկինում գործող կաթիլային ոռոգման եղանակը հատկապես արդյունավետ է Արարատյան հարթավայրում խաղողի, պտղի և բանջարեղենի արտադրության համար: Այդ նպատակով երկարաժամկետ ռազմավարության միջոցառումներում գտնում ենք, պետք է նախատեսվեն նաև կաթիլային ոռոգման համակարգերը:

Արտադրատեխնիկական սպասարկումների համակարգ: Խաղողագործության արդյունավետության բարձրացման համար կարևորվում է արտադրատեխնիկական սպասարկումների հետագա զարգացումը և մատուցվող ծառայությունների ընդլայնումը, որը անբավարար է ներկայիս դրությամբ: Այդ ուղղությամբ անհրաժեշտ է արմատապես բարելավել սպասարկումների որակը և մակարդակը, այն աստիճանաբար հասցնելով միջազգայնորեն ընդունված չափանիշներին:

Մեքենայացում: Գյուղատնտեսության տեխնիկական ապահովման ծառայությունները, հիմնականում, մատուցվում են «Ագրոսպասարկում» ՊՓԲԸ-ի 37 շրջանային բաժնետիրական ընկերությունների միջոցով, որոնց 34 տոկոսը կազմում է պետական բաժնեմասը: Առկա տեխնիկան քանակական առումով բավարար է, սակայն դրա սարքինության ցածր աստիճանը, պահեստամասերի ձեռք բերման դժվարությունները, ֆիզիկական և բարոյական մաշվածությունը, ինչպես նաև, որոշ դեպքերում անհամապատասխանությունը, որն առկա է բարձր հզորություն ունեցող տեխնիկայի և տնտեսությունների փոքր չափերի միջև՝ հանգեցնում են խաղողի (այլ բույսերի մշակության նույնպես) արտադրության համար կատարվող մեքենայացման զգալի դժվարությունների: Անհրաժեշտ է նպաստել գյուղտեխնիկայի և գյուղգործիքների ներքին շուկայի առողջ մրցակցային միջավայրի ձևավորմանը: Այդ առումով անհրաժեշտ է

- Հաշվի առնելով վերջին տարիների փորձը, զարգացնել գյուղմեքենաների և սարքավորումների համատեղ օգտագործման, վարձակալական համակարգերը, այդ թվում նաև՝ լիզինգային հիմունքներով:
- Նպաստել օգտագործված գյուղատնտեսական տեխնիկայի, մեքենաների ու սարքավորումների ներքին շուկայի ձևավորմանը, ինչպես նաև լիզինգային գործունեությամբ զբաղվող արտերկրների ընկերությունների ներգրավմանը և տեղական համապատասխան մատակարար կառույցների ստեղծմանը, նկատի ունենալով, որ գյուղտեխնիկան և սարքավորումները կարող են ներմուծվել

հանրապետության նաև անսարք վիճակում և դրանց վերանորոգումը կարելի է կազմակերպել օգտագործելով առկա մեքենաշինական գործարանների հզորությունները:

Նյութատեխնիկական մատակարարումներ: Վերջին տասնամյակում պարարտանյութերի օգտագործման նվազեցման հիմնական պատճառներից է տնտեսությունների շրջանառու միջոցների սղությունը: Հասկանալի է, որ այդ փաստը բացասաբար է ազդում խաղողի բերքատվության վրա: Սակայն նշենք, որ պարարտացման նորմերը վերջին տասնամյակում չեն վերանայվել, իսկ շուկայական տնտեսության պայմաններում, ելնելով գնագոյացման նոր պարամետրերից, և գործոններից նորմերի վերանայումը համարում ենք անհրաժեշտ: Խաղողի բերքատվության վրա անշուշտ ազդում են նաև բույսերի պաշտպանության միջոցների ոչ բավարար կիրառումը: Ընդհանուր առմամբ, խաղողի նյութատեխնիկական սպասարկումների բնագավառում ծառացել են բազմաթիվ իրենց լուծումը պահանջող հիմնախնդիրներ.

- Մասնավորապես վերջնական ձևավորված չէ իրավական դաշտը:
- Բացակայում են անհրաժեշտ ինստիտուցիոնալ կառույցները:
- Հստակ չեն գործառույթները պետական կառավարման մարմինների միջև:
- Բավարար չափով ուսումնասիրված չէ միջազգային փորձը, առկա են կադրերի ուսուցման և վերապատրաստման խնդիրներ և բազմաթիվ այլ գործոններ:

Գիտակրթական, խորհրդատվական, տեղեկատվական համակարգեր: Գիտակրթական, խորհրդատվական և տեղեկատվական ենթակառուցվածքների գործունեությունը դեռևս լիարժեք չի համապատասխանում արտադրա-տնտեսական նոր պայմաններում խաղողագործության առջև ծառացած խնդիրների լուծմանը:

Գիտակրթական համակարգում դրական տեղաշարժերի հետ մեկտեղ, առկա են նաև օբյեկտիվ և սուբյեկտիվ բնույթի բացասական խոչնդոտող գործոններ, որոնցից են՝

- Գիտահետազոտական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը, գիտական կադրերի պատրաստումը և վերա-պատրաստումը:
- Գիտահետազոտական աշխատանքներում դեռևս ցածր է ագրարային քաղաքականության իրագործման թեմաների տեսակարար կշիռը, մասնա-

վորապես խաղողի իրացման խթանման, տնտեսավարման նոր ձևերի ներդրման, հարկային, մաքսային և գնային քաղաքականության իրականացման ուղղությամբ:

- Բարձր որակավորում ունեցող կադրերի պատրաստման համար պետք է ընդլայնվեն հնարավորությունները արտերկրներում մասնագետների վերապատրաստման ուղղությամբ:

Հաշվի առնելով գիտակրթական համակարգի ռազմավարական նշանակությունը՝ խաղողագործության ինչպես նաև այլ ճյուղերի կայուն առաջընթացի ապահովման գործում առաջարկվում է՝

- Հնարավորությունների սահմաններում ընդլայնել դրամաշնորհների հաշվին և մրցույթային կարգով իրականացվող գիտահետազոտական աշխատանքները, ներառելով ՀՀ գիտության և կրթության նախարարության ֆինանսական միջոցները:

- Համատեղ ծրագրերի իրագործման միջոցով ուժեղացնել փոխհամագործակցությունը արտերկրների գիտահետազոտական հաստատություն-ների, ինչպես նաև մասնավոր հատվածում աշխատող գիտնականների հետ:

- Ընդլայնել հայրենական ագրարային կրթական համակարգի և արտերկրների գիտաուսումնական հաստատությունների միջև կապը, մասնավորապես՝ համատեղ ծրագրերի իրականացման, մասնագետների, ուսանողների, ինչպես նաև գիտական նվաճումների փոխանակման բնագավառներում:

Խորհրդատվական և տեղեկատվական համակարգեր: Հանրապետության ագրոպարենային համակարգում տեղի ունեցող գործընթացների արդյունավետությունը, գիտական նվաճումների և առաջավոր փորձի ներդրման խթանումը գյուղական բնակչության կենսամակարդակի բարձրացմանն ուղղված քաղաքականության արդյունավետությունը մեծապես պայմանավորված է ամբողջական և հավաստի տեղեկատվական դաշտի ձևավորմամբ: Տեղեկատվական համակարգի արդյունավետության բարձրացման բնագավառում իրենց լուծումն են պահանջում մի շարք խնդիրներ, մասնավորապես՝

- Անհրաժեշտ է ամրապնդել խորհրդատվական և տեղեկատվական համակարգերի ու գիտակրթական համակարգի ֆունկցիոնալ կապը և կառույցների փոխհամագործակցությունը:

- Նպաստել տեղեկատվությունից օգտվելու մատչելիությանը փոքր տնտեսությունների համար:

- Հնարավորությունների սահմաններում ընդլայնել բրոշյուրների, ծեռնարկների, բուկլետների և այլ դիդակտիկ նյութերի հրատարակումը և դրանց անվճար հատկացումը առավել անապահով շահառուներին:

Ելնելով ծառացած խնդիրների վերլուծությունից առաջարկվում է՝

- Բարելավել խորհրդատվական ծառայությունների ֆինանսավորումը, նկատի ունենալով նաև մասնավոր հատվածի ծառայություններին աջակցությունը:
- Բարձրացնել փոխհամագործակցության մակարդակը խորհրդատվական ծառայությունների և «Ագրոպրես» ՊՓԲԸ-ի միջև:
- Վարվող քաղաքականության կատարելագործման շնորհիվ նպաստել մասնավոր հատվածում վճարովի խորհրդատվական և տեղեկատվական ծառայություններ մատուցող տարբեր կազմակերպա-իրավական կարգավիճակ ունեցող կառույցների ձևավորմանը:
- Ապահովել անընդմեջ, ամբողջական և հավաստի տեղեկատվության հավաքագրումը, ամփոփումը և վերլուծությունը՝ ոլորտի, այդ թվում՝ խաղողագործության ճյուղի տնտեսավարող սուբյեկտներին մատուցելու համար:

Լիզինգային գործարքներ: Խաղողի արտադրությունում գյուղտեխնիկայի և սարքավորումների օգտագործման հետ կապված ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի շուրջ կեսը, որի հետևանքով չեն կարող սեփական միջոցների հաշվին իրականացվել բազմաթիվ փոքր գյուղացիական տնտեսությունների կողմից, իսկ վարկային ռեսուրսների ստացումը վերջիններիս համար գրեթե անմատչելի է և տնտեսապես անարդյունավետ՝ բարձր տոկոսադրույքի, գրավադրման պայմանների, ապահովագրական համակարգի բացակայության և այլ պատճառներով: Այդ իրավիճակում լիզինգային հիմունքներով գյուղտեխնիկայի ու սարքավորումների տրամադրումը, փաստորեն, վարկավորման այլընտրանքային տարբերակ է և ունի ռազմավարական նշանակություն, քանի որ թույլ է տալիս մեքենայացնել գյուղատնտեսական աշխատանքները և բարձրացնել ճյուղի արդյունավետությունը, հետևաբար՝ մրցակցությունը ներքին և արտաքին շուկաներում: Այդ կապակցությամբ լիզինգի տարածումը հեռանկարային է Հայաստանի պայմաններում և արդիական:

Գյուղատնտեսական ապահովագրություն: Գյուղմթերքների արտադրության ոլորտում առկա ռիսկերը պետք է դիտարկվեն համակողմանի, այսինքն հաշվի առնվեն բոլոր ռիսկերը և քաղաքականությունը:

Առկա ռիսկերից են, մասնավորապես՝

- Տնտեսության որոշակի անկայունությունը:
- Բնական աղետների, տեխնածին և այլ բնույթի արտակարգ իրավիճակների առաջացման բարձր արդյունավետությունը:
- Խաղողի իրացման հետ կապված չլուծված խնդիրները:
- Տնտեսությունների մասնատվածությունը, փոքր չափերը և արդյունքում՝ անվճարունակությունը:
- Վերամշակող ընկերությունների շրջանառու միջոցների սղությունը:
- Օրենսդրության որոշակի անկատարությունը և այլն:

Հասկանալի է, որ թվարկած ռիսկերից յուրաքանչյուրի նվազեցումը փոքրացնելու է խաղողի արտադրության ընդհանուր ռիսկայնությունը: Սակայն նշենք, որ բոլոր ռիսկերի շարքում առանձնահատուկ տեղ է զբաղեցնում ապահովագրական համակարգի բացակայությունը: Այդ հիմնախնդրի լուծման ուղղությամբ անհրաժեշտ է պետության և դոնոր-կազմակերպությունների աջակցությունը: Մասնավորապես, ապահովագրական ընկերություններին կարող են տրամադրվել հարկային արտոնություններ, դրանց որոշ ծախսումները կարող են փոխհատուցվել սուբսիդիաների կամ այլ ֆինանսական հոսքերի հաշվին: Անհրաժեշտ է «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի ընդունումը:

Ընդհանրացնելով ուսումնասիրված ենթակառուցվածքների գործունեությունը և դրանց բարելավմանն ուղղված առաջարկվող միջոցառումները, նշենք, որ ենթակառուցվածքային բարեփոխումները կխթանեն ոչ միայն խաղողագործության ճյուղի և խաղողի վերամշակող արդյունաբերության արդյունավետությունը, այլ նաև մյուս ճյուղերի (կարտոֆիլագործության, բանջարաբուծության, պտղաբուծության) արդյունավետության բարձրացումը: Բացի դրանից, հասկանալի է, որ ենթակառուցվածքների գործունեությունը հնարավոր չէ հարմարեցնել որևէ ճյուղի (տվյալ դեպքում՝ խաղողագործության) արդյունավետության բարձրացմանը, քանի որ ենթակառուցվածքային համակարգերը իբրև կանոն պետք է ապահովեն ագրարային ոլորտի գործունեությունը և դրա կայուն զարգացումը: